Նոյնը արձանագրուած է նաև դանէն ներս դիմացի պատին մէջ զետեղուած ջրի [illegible] վրայ։

Մարտիրոս պտրք. նորոգած է նաև Գեթսեմանիի Ս. Աստուածածին եկեղեցիին տանիքը, կամարները և դուռը. եկեղեցիին արդի կառուցուածքէն ալ կը հասկցուի թէ վերի մասը ժամանակին Հայոց թագաւորներէն շինուած է իբր վանք կուսանաց. բայց յետոյ կործանուելով՝ չգիտցուիր թէ ի՛նչ պատճառաւ Հայք չեն կարողացած վերաշինել քանդուած մասը. տեսնել այս մասին Հանեն (էջ 270-72)։ Հաւանաբար Ս. Աստուածածնի եկեղեցին ամբողջովին Հայոց սեփականութիւնն էր. «. . . այս փառաւոր սբ. եկեղեցին՝ յատուկ էր ազգիս Հայոց. որպէս ի յորմսն եկեղեցւոյն երեւին յիշատակարանք նորոգողացն և թուականք երկաթագիրք, որ լաթին լուսարար մի գչարեցաւ յայսմ պատճառէ, և կռանաւ եղծեաց գաղտ յումեքէ ըզգիրսն. . . սակայն մնացեալ է մէկ վկայ բանիս՝ յիշատակարան Մարտիրոս վարդապետին սրբոյ քաղաքիս պատրիարքի մերոյ. գրեալ յաջակողմն դրսի մեծ դրան եկեղեցւոյն այսպէս. ի Հայոց թուականին ԸՃՀ (= 1421) ես տէր Մարտիրոս Արքեպս. Երուսաղէմի, վասն բազում ջուրցն որ լցուէր յեկեղեցին, սալ կապեցի. զմէջն և զտէնիրն շինեցի. յիշման առնէք զիս արժանի»։ (Անդ. էջ 272-3)։ Մարտիրոս պտրք. կ'ապրէր մինչև 1450 թուականը, վասնզի ան կը յիշատակուի Գրիգոր կթղ. Մուսաբէկեանցի Գահիրէէն Եւգինէոս պապին ուղղած գրութեան մէջ որ նոյն թուականին հաղորդուած էր Մարտիրոսի, և անոր ձեռքով ալ Եւգինէոսի յաջորդ՝ Նիկողայոս պապին ղրկուած։ Նոյն այս գրին լատիներէն օրինակը գտնուած է Մեդիչեական Լաւրենդեան մատենադարանի ձեռագիրներուն մէջ. անոր թարգմանութենէն հետեւեալ տողերը տեղեկութեան համար կը դնենք հոս. «. — այլ ես (Գրիգոր կթղ. Մուսաբէկեանց) որ ի վերայ ամենայն եպիսկոպոսաց եւ վարդապետաց եւս եւ յերուսաղէմացւոց աշխարհի անարժան կաթողիկոս կարգեալ եմ . . .» (Պաշեան, էջ 149—150)։

ՄԱՐՏԻՐՈՍ ՊԵ. ՊՈՒՐՍԱՑԻ.—(1491-1501). Հալէպի Ս. Քառասնից եկեղեցւոյն մատենադարանը ունի (թիւ 71) ձեռագիր Գանձարան մը, (Ս. Յակոբ գրուած) որուն յիշատակարանին մէջ կը յիշուի Պուրսացի Մարտիրոս պտրք. (տե՛ս Վրթանէս